



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

26. 583

ԲԵՐԵԼ. Ա.

ՊԹՎԱՆՑԻԿԱՐԱԳԱ Խ  
ՎԻԴՈՒԱԼԻՏԵ

335  
Բ-411

1906

№ 1.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ, «ԱՍՏՂԻԿ» ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ա. ԲԵՐԵԼ

# ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԻՒՆ

Ո Ե

## ՍՈՑԻԱԼԻԶՄԸ



Դամակագրութիւն Հանօթ բահանայի և սոցիալ-  
դեմոկրատ Թերելի.

Փոխադրեց

Վ. ԽՈՐԵՆԻ



Գ. Ա. Դ. Ա. Շ. Ա. Պ. Ա. Տ.

Տպարան Սամ Աթոռութ Մորու Էջմիածնի

1906

335

F - 41

05 JAN 2010

№ 1.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ «ԱՍԴԻԿ» ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ա. ԲԵԲԵԼ

# ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԻՒՆ

Ո Ւ


## ՍՈՑԻԱԼԻԶՄԸ



Նամակագրութիւն Հսեսծ բահանայի և սոցիալ-  
դեմոկրատ Թեքելի մէջ.

Փոխադրեց

Վ. ԽՈՐԷՆԻ



Վ. Ա. Դ. ՌՇԱՊԱՏ

Տուրան Մագ Աթոռած Մրբու Էպիստեմնի

1906

Ժամանակակից  
2/1915

01.03.2013

26.583

ԱՐԴՅՈՒՆԱԳՈՅՆԻ

ԳԱՅԻ ԼՈՒՅՈ

Հայոց Առաջնահամար համար Առաջնահամար



## ՀՈՀՈՓ ՔԵԶԵՆՑԻ ՆԵՐԵԿ

ԳԵՐՄ. ՍՈՑԻԱԼԻՆՈԿՐԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻՆ

Չերքի թերթի 21 նոյեմբերի, № 114-ի  
ուսաժնորդողում Գուք նորից մի քաղւածք  
ք անում Չերք հրատարակած մի բրոշիւ-  
լից, որի վերնագիրն է, «Գերմանական բէյխու-  
ռազի ու լանդտագների պարլամենտական  
տրծունեութիւնն ու սոցիալգեմոկրատեան»:

Այդ քաղւածքի մէջ ի միջի այլոց հաս-  
ուառում է, որ այն գէպքերում, «երր պէտք  
ժողովրդին ստրկացնել շշմեցնել խաթել  
և կողոպտել՝ պետութիւնն ու եկեղեցին  
լրար և զրայրական դորձակցութիւն են ցոյց  
ուղիս»։ Քրիստոնեական հոգեորականու-  
թիւնն ու ժամանակակից պետութիւնը «միա-

նում են ի մի, երբ խօսք կայ ժողովրդին  
ճնշելու»։ Հոգևորականութիւնը ամենուրեք  
գոյութիւն ունի «նրա համար, որպէս զի  
ժողովրդին դէպի ետ քաշի, բարբարոսու-  
թեան վիճակին հասցնի»։

Որովհետեւ ես ոչ միայն կաթոլիկ եկե-  
ղեցու անդամ եմ, այլ և հոգևորականու-  
թեանն եմ պատկանում և՝ իրեւ քահա-  
նայ՝ պարտաւոր եմ կրելու մի զգեստ, որը  
ամեն հանդիպողի ցոյց է տալիս կաթոլիկ  
կղերականութեան պատկանելու, ուրեմն, հա-  
մաձայնւեցէք, որ ես անձամբ և յատկա-  
պէս վիրաւորւած եմ վերոյիշեալ մեղա-  
դրանքներից և չափազանց արատաւորւած  
Volksstaat-ի բոլոր ընթերցողների առաջ,  
որոնց ես ստիպւած եմ հանդիպելու յա-  
ճախ։ Այս նկատի ունենալով ես ինձ հար-  
կագրւած եմ զգում դիմելու Զեր ճշմար-  
տասիրութեան և խնդրելու Զեր ներկայա-  
ցնել Զեր ընթերցողներին ծանօթացնելու  
համար հետեւեալ արդարացումները ի պաշտ-  
պանութիւն իմ անձնաւորութեան, ես կար-  
ծում եմ որ ես աւելի պարտաւոր եմ և  
պէտք է որ այդ պահանջեմ, քանի որ ես

բացի իմ՝ պատուից և բարի անունից ուրիշ  
ոչինչ չունեմ։ Այսպիսով բառի լրիւ իմաս-  
տով ինձ յարմար է այս խօսքը։ «Պատիւը  
կորցնել—ամեն ինչ կորցնել»։

Դուք կաթոլիկ եկեղեցու հակառակորդն  
եք, Դուք հակառակորդ եք նաև աղատա-  
միտ բուրժուազիայի։ Երբ վերջնիս վարձու  
գրչակները Զեր նախատում էին Տոկէան-  
ների մեղքերի համար \*), Դուք բարձրաձայն  
գոռում եկք Զեր վերաբերմամբ կատարւած  
անսարդարութեան մասին և միանգամայն  
ճշտութեամբ ցոյց տւիք, որ չի կարելի իրենց  
սոցիալիստ անւանող առանձին անհատների  
արածների համար սոցիալիզմին պատասխա-  
նատուութեան ենթարկել։ Դուք մերժեցիք  
ամեն մի ընդհանրութիւն Հազենկլեվերների  
ու Հասսելմանների հետ։ Ի մեծ զարմանս  
իմ ես տեսնում եմ, որ Դուք կաթոլիկու-  
թեան ու կաթոլիկ կղերականութեան նկատ-  
մամբ հենց նոյն սխալի մէջ էք ընկնում։ որի

\*) Այս արտայայտութիւնը վերցրած է այն  
ժամանակաւայ սոցիալդեմոկրատական երկու  
ուղղութիւնների բանակուից։ Ծ. Հոհովի.

Համար այնպէս խիստ յարձակուում էք ազատամիտների վրայ։ Դուք հետեղների սխալանքների համար եկեղեցուն էք պատասխանատու դարձնում։ Իսկ պակասութիւնների ու մեղքերի համար էլ—կրօնին։ Առանձին անհատների մեղքերը Դուք ամբողջ հասարակութեան վրայ էք զցում։ Դուք մեղաւորներին արդարների հետ հաւասար էք դատում։ Ասացէք ինձ մի արատ կամ պակասութիւն, որը բոլոր մահկանացուների էլ բնութեան մէջ արմատ չունենայ, —մի անարդարութիւն կամ գարշելի կողմ։ որ քրիստոնէական կրօնն ու եկեղեցու վարդապետութիւնը չդատապարտէին ու չարդելէին։ Դոնէ մի բանի անուն տռէք, որը Ձեր կարծիքով ամծթալի ու անարժան է համարւում։ որ Դուք ձգտում էք ոչնչացնել և որը միաժամանակ ոչնչացման ու արմատախիլ լինելու չմատներ քրիստոնէական կը քօնի հիմունքներով եթէ նման բան երբ և իցէ կատարւել է։ Թւեցէք նոյնպէս մի որևէ լաւ, ազնիւ, բաղձալի բան, որ և է առաքինութիւն, որ ծաղկած ըլինի այնտեղ ուր կատարւում են քրիստոնէութեան պատ-

ւերները։ Դուք այդ ի հարկէ, անել չէք կարող։ Եւ հենց զրա համար էլ Դուք պէտք է խոստովանեք, որ այն չարիքի մեղքը, որի համար Դուք պախարակում էք, ոչ թէ կաթողիկութեան, ոչ թէ կրօնի վրայ է ընկնում այլ մարդկանց։

Միթէ Ձեզ յայտնի չէ, որ հազարաւոր, տասը հազարաւոր և միլիոնաւոր կաթողիկ քրիստոնէաներ ու քահանաներ 1800 տարւայ ընթացքում տառացի կատարել են Քրիստոսի խօսքը. «Եթէ դու ուզում ես կատարեալ լինել գնա՛, ծախիր բոլորը՝ ինչ ունես, բաժանիր աղքատներին և Եկ իմ ետեկից»։ Միթէ Դուք չգիտէք, որ Ֆրանցիսկ Աստիզցին, Պառլացի Վինցենտը և շատ ուրիշները աղքատների համար միլիոնաւոր տալեր են հաւաքել որ նրանք իրենց ամբողջ ունեցածը բաժանել են կարօտեալներին ու սովեալներին, իսկ իրենք էլ Աստծու և իրենց մերձաւորների սիրուց կամաւոր կերպով աղքատի վիճակն են ընտրել, որպէս զի աղքատների հետ աղքատ լինին։ Միթէ Դուք չգիտէք, որ այդ օրինակին հետեւում են և ներկայումս հազարաւոր և

Հարիւր հազարաւոր քրիստոնեաներ ու քառանաներ:

Եւ ահա՝ երբ՝ օրինակ՝ Ձ. Աետակելեր եպիսկոպոսի եղբայրը հուսարական նշանադգեստը (մենտիկը) փոխում է կրօնաւորի կոշտ հագուստով և սպայի ուրախ կեանքը կրօնաւորի խիստ նիստ ու կացով, երբ աշխատասեր ուսանողը բոլոր փելիսոփայական համադրութիւնները՝ սկսած Սոկրատից և Պիւթագորոսից մինչև Շոպենհաուէր, Ֆեյերախ, Լասսալ ու Մարքս՝ սովորելուց յետոյ գալիս է այն եղբակացութեան, որ կաթոլիկութիւնն է ուսմունքներից ամենալաւը, ամենակատարեալը, և երբ նա դրանից յետոյ աստւածաբան ու քահանայ է դառնում, որպէս զի իր բոլոր ուժերը գործ դնի այդ միակ ճշմարիտ ուսմունքի տարածման համար—ի՞նչն է, հարցնում եմ ես, Զեզ իրաւունք տալիս կասկածելու նրանց ձգտումների, անկեղծութեան ու մաքրութեան վրայ և մեղադրել նրանց «ինքնաշահ կեղծաւորութեան» մէջ:

Երբ սոցիալիզմի հակառակորդների կողմից նման մեղադրանքներ են արւում պ. պ.

Իիրկնելստի ու Բերելի դէմ՝ Դուք խոր ատելութեամբ լցւած այն վատթար վիճակն էք ցոյց տալիս, որի մէջ Դուք ընկնում էք միմիայն նրա համար, որ դաւանում էք Զեր սկզբունքները: Իմ արիւնն էլ է պղտորւում նմանօրինակ մեղադրանքներից և ես էլ նոյնպէս յոյս եմ ունենում թուլացնելու դրանք միայն կաթոլիկ հոգևորականութեան մեծ մասի աղքատիկ վիճակը ցոյց տալով: Եթէ չհաշւենք դպրոցական վարժապետներին և գիշերապահներին՝ հազիւ թէ ճարւի մի արհեստ, որը ստորին կաթոլիկ հոգևորականութեան արհեստից վատթար վարձատրւի: Ես կարող եմ ապացուցանել, որ նիւթականի կողմից ես աւելի վատթար վիճակի մէջ եմ՝ քան մի լակէյ կամ աղախին: Սակայն արդիւնքի չնչնութիւնը չարիքներից ամենափոքրագոյնն է: ատելութիւն, հալածանք, ծաղր ու ծանակ—ահա՝ այժմ կաթոլիկ քահանայի բաժինը:

Այսպէս, երբեք մի մոռացէք այս խօսքը. «Մի արա ուրիշն այն, ինչ չես ուղում, որ քեզ անեն»:

Բայց, գուցէ, Դուք այժմ ասէք, —

Եթէ նոյն իսկ ամբողջ կաթոլիկ հոգիորականութեան չի կարելի մեղադրել շողոքորթութեան ու շահամոլութեան մէջ, — բայց և այնպէս իրենց գործին լուրջ և ազնւութեամբ վերաբերողները ոչ այլ ինչ են, բայց եթէ խելադար ցնորդներ ու յիմարներ: Եթէ Դուք այսպէս ասէիք՝ ես գուցէ Զեղ արդարացնեի: Բայց այս դէպքում էլ ինձ համար բոլորովին անհասկանալի կլինէր՝ թէ ինչու են սոցիալիստները զայրանում ու բողոքում: Երբ նրանց էլ են յարգանքի այսպիսի տիտղոսներ նւիրում: Ես մինչև այժմ ենթադրում էիր որ Volksstaat-ի խմբագիրները բարոյական աւելի մեծ զգայութեան ու ճշմարտասիրութեան տէր են՝ քան կիսապաշտօնական ու ազատամիտ մամուլի ներկայացուցիչ իրենց ընկերները: Հակառակ դէպքում ես չէի դրի այս փոքրիկ պաշտպանողական ճառը և այս Զեղ չէի ուղարկի: Կարծում եմ որ ես չեմ սիալում իմ դատողութիւնների մէջ:

Արքեպիսկոպոս Քահանայ:

22 նոյեմբերի 1873.

— 10 —

## ԲԵԲԵԼԻ ՊԵՏԵՍՄԵՆԻ ՀՈՀՈՓԻՆ

Արքով պարոն,

№ 9-ում Դուք գետեղել էք Զեր բացնամակը, որով՝ իրմւ եկեղեցու սպասարո՛ Դուք գուրա էք գայիս «Դերմանական րէյխստագի պարլամենտական գործունէութիւնը և այլն» կրօնին ու եկեղեցուն հակառակ բըոշիւրի դէմ: Զեր պաշտպանութիւնը պատասխան է պահանջում և այդ պատասխանն էլ ինձնից իրբեն այդ բըոշիւրի հեղինակից: Որ այս շուտ չէ կատարւել՝ մեղաւորը իմ երկարատև հիւանդութիւնն է, որ արգելում էր ինձ գրել: Եւ եթէ իմ պատասխանը մի քիչ երկար կլինի՝ սրանից Դուք կարող էք եղրակացնել, որ ես Զեր առար-

կութիւնները բաւականին կալեոր և նշանակալից եմ գտնում, մի ընդարձակ յօդածով դրանք վերլուծելու:

Դուք անձամբ Զեզ շահագրգռւած ու վիրաւորած էք զգում իմ բրոշիւրի մի քանի տեղելից: Սակայն, Եթէ Դուք մի անգամ էլ կարգայիք այդ բրոշիւրը — նրա մէջ անձնական վիրաւորանքի համար ոչինչ չէիք գտնի: Հոգեոր անձերի ես չեմ դիպել: Ես երբեք չեմ կասկածել, որ «Եկեղեցու սպասաւորների մէջ էլ կան որոշ թրւով անձեր», որոնք իրենց կոչումին անկեղծ ու ազնիւ համազմունքով են վերաբերում»:  
V  
 Այդ ես չէի կարող մերժել մանաւանդ այն պատճառով՝ որ ինձ մի քիչ ծանօթ են այն պատրաստական հիմնարկութիւնները, ուր, այսպէս ասած, թթխմորն է դրւում: ուր «Եկեղեցու սպասաւորութեան» համար երիտասարդ ու անփորձ հոգիներ են դաստիարակւում: Ես աւելին կասեմ: Ես համաձայն եմ որ կան հազարաւոր մարդիկ նոյն իսկ զարգացման շատ բարձր աստիճանի վրայ կանգնած, որոնք հոգով ու մարմնով նւիրւած են եկեղեցուն և նրա ուսմունքին: Ես

ընդունում եմ, որ կան հազարաւոր և տասնեակ հազարաւոր մարդիկ, որ եղել են նոյն իսկ միլիոնաւորներ, որոնք ամեն տեսակ զոհերի գնով աշխատում և աշխատել են եկեղեցու միջոցով իրենց հոգու համար փըրկութիւն ստանալ: Բայց միթէ իմ արտայայտած մաքերի, դրութեան դէմ որ և բան ասում է այս: Ուղղակի՞ ոչինչ, բացարձակապէս ոչինչ: Նոյն անձնազոհութիւնը, նոյն ինքնաձաղկումն ու ինքնուրացութիւնը, նոյն մոլեուանդ հաւատը, որոնք կապում են միլիոնաւոր մարդկանց քրիստոնէութեան հետ — այդ բոլոր յատկութիւնները նոյնպէս երեան են եկել նաև հրէութեան, բուրդայայկանութեան, կոնֆուկիոսի ու Մահմեդի վարդապետութիւնների հետևողների մէջ: Այս բոլոր միլիոնները Զեզից ոչ պակաս իրաւունքով կարող են ցոյց տալ իրենց կրօնի աջողութիւնները, իրենց հաւատացեալների զոհերին:

Եթէ մէկն ու մէկը մտածէր ստատիստիկայի օգնութեամբ ցոյց տալ՝ թէ արդեօք որ կրօնից են միլիոնաւոր մարդիկ աւելի մոլեուանդ հաւատացել չարչարւել ու կուել

Համարի համար, կրօններից որի մէջ է կատարւել ամենամեծ անձնուրացութիւնը, առմենամեծ ինքնաճաղկումն ու ամենամեծ անձնագոհութիւնը՝ ոչ մի կասկած չէր լինի, որ բուդյայի կրօնը ամեն կողմով կդերազանցէր կաթողիկութեանը և ընդհանրապէս քը լիստոնիութեանը:

Հետեարար կրօնի հենց Զեր սեփական գնահատմամբ բուդյայականութիւնը պէտք է ամենաճշմարիտ ու խակական կրօնը համարւէր: Եւ ես իմ կողմից մեծ մեղք արած չեմ լինի, իթէ աւելացնեմ, որ՝ չնայած այդ ամենին՝ բուդյայականութիւնն էլ նոյն չափով, ինչ չափով քրիստոնէութիւնը, միայն նեղել ու ճնշել է մարդկութեան ձրդտումը զէպի ազատութիւնը, ու ինքնուրոշնութիւնն: Բայց յանուն Զեր եկեղեցու ուսմունքի Գուք բուդյայականութիւնը պէտք է կեղծ, մոլար ու հերետիկոս վարդապետութիւն համարէք: Մինչդեռ շատ հեշտ է ցոյց տար որ իմաստ բարոյականութեան տեսակետից բուդյայականութիւնը ոչ միայն հաւասար է քրիստոնէութեան, այլ նոյն իսկ հենց այդ բարոյական պահանջները և ուրիշ շատ

ծէսեր ու զողմաներ քրիստոնէութիւնը փոխ է առել աւելի հին բուդյայականութիւնից: որ ծաղել է քրիստոնէութիւնից 400 տարի առաջ:

Այժմ մենք մօտենում ենք ինգրի գլխաւոր կետին: Ի՞նչ է քրիստոնէութիւնը: Պատասխան՝ ինչպէս նաև ամեն մի կրօն՝ դա մարդու ստեղծածն է: Մարդս իր գարգայման ստորին աստիճանի վրայ համարեա ոչ մի պարզ գաղափար չունէր բնութեան ու իր երեսյթների մասին, որոնցից մի քանիսը նրան օգտակար էին, իսկ միւսները վնասակար: Եա ոչ մի հասկացողութիւն չունէր իր վիճակի մասին, իբրև մարդու և բոլոր անհասկանալին, ինչ կատարում էր իր շուրջը զանազան գերբնական էակների էր վերագրում: Այդ էակները, նրա կարծիքով այդ անմեկին երեսյթները իրենց քմահանոյքով ու քէֆով էին առաջացնում: Եւ ահա մարդը որպէս զի նրանց ողորմածութիւնը ձեռք բերի ու յօգուտ իր տրամադրի՝ աշխատել է նրանց վրայ ազդել աղերսներով, աղօթքներով, ծիսակատարութիւններով ու զոհաբերութիւններով: Նայած

ժողովրդի զարգացման աստիճանին, —որ ամենից առաջ որոշում է նրա գոյութեան նիւթական պայմաններով՝ իսկ յետոյ հողի ու կիմայի արդիւնաբերութեան պայմաններով, — բնութեան անհասկանալի ուժերը, իրեւ գերբնական էակները, օժտում են զանազան յատկութիւններով ու կերպարանքներով:

Համաձայն դրան ստեղծւում են և այդ էակներին պաշտելու միջոցները, որ շուտով բարդում են ու զարգանում: Բայց որովհետեւ մարդու աջողութիւններն ու անաշողութիւնները գերազոյն էակների մօտ կըրօնական պատւիրանները ճշգրիտ ու բարեխիղճ կատարելուց էր կախւած՝ ուստի այդ պատւիրանների կատարումը այնպիսի անձերի տեսչութեան պէտք է յանձնւէր, որոնք իրենց բացառապէս կրօնական ծառ այութիւնների էին նւիրել:

Ըստ ինքեան հասկանալի է, որ նրանք շուտով և իշխողներ դառնան: Այսպէս առաջ եկաւ սրբապաշտօնների (քրմերի) դասակարգը, որը իւրաքանչիւր առանձին ժողովրդի իշխող դասակարգերի պահպանու-

թեամբ, — ինչպէս այդ ամենուրեք է նկատուել, — կարողացել է կարճ միջոցում զգալի կերպով ընդլայնել իր հզօրութեան սահմանները: Հոգեորականութիւնը աշխատելով դրա հետ ժողովրդի մէջ հաւատ ներշնչել ու հաստատել գէպի իր նշանակութեան կարեւորութիւնն ու իր անհրաժեշտութիւնը՝ հենց սրանով էլ հնարաւորութիւն է ձեռք բերել արգելք հանդիսանալու լոյսի ամեն մի թափանցման, մարդկութեան ամեն տեսակի զարգացման: Բնութիւնն ու իր երեսոյթները չճանաչելու հետ միասին մարդկութեան մտքի վրայ ազգել են նաև ճնշումն ու բըռնութիւնը իրենց սեփական կամ թէ օտար ժողովուրդների ու սրանց իշխողների կողմից: Վերջինս յաճախ նկատում էր իրեւ արժանի պատիճ գործած մեղքերի համար \*) և աւելի էր դրվում կրօնական մարդեիւնների էին նւիրել:

\*) Օր՝ համարեա մեր բոլոր պատմագիրները հայ ազգի գլխին եկած բոլոր նեղութիւնները, արշաւանքները, թշւառութիւնները, նոյն իսկ քնական աղետները ժողովրդի գործած մեղքերով են բացատրում:

ծ. Փ.  
2



զանքների: Յաճախ այն գէպը երում երբ  
ժողովուրդը իրեն անընդունակ էր զգում իր  
սեփական ուժի միջոցով ազատւելու ձնշու-  
մից կամ բռնաւորից, նրա մէջ երկնային  
փրկի, մեսիայի յօյն էր յդանում: Որը իբ-  
րև պարզե վերին էակին հաւատարմու-  
թեամբ ծառայելու համար պէտք է յայտնելի  
ու ազատի ժողովրդին: Այս և նման գա-  
ղափարների, աւելի կամ պակաս որոշու-  
թեամբ, պատահում ենք համարեա բոլոր հին  
ազգերի մէջ: Մի առանձին յամառութեամբ  
այս գաղափարը՝ շնորհիւ փոքրասիական ու  
սահմանակից աֆրիկեան ժողովուրդների  
պատմական զարգացման՝ պահպանւել է հրե-  
ութեան մէջ, որից և յետազում ծագեց  
Քրիստոնէութիւնը: Քրիստոնէութիւնը եր-  
բեք չի յայտնւել իբրև պատրաստի, բոլորու-  
վին որոշակի կրօն, ինչպէս որ մեզ սովորա-  
բար սովորեցնում են: Նա միայն աստիճա-  
նաբար, քայլ առ քայլ է զարգացել, մինչեւ  
որ կրօնական շէնքից փոխւել է կրօնական  
լրիւ վարդապետութեան, որի կիրառութիւնը  
մարդկութեան ձնշելու համար շուտով հաս-  
կացան իշխող դասակարգերը: Դա, այսինքն

քրիստոնէութիւնը, նոյնքան քիչ է իր ըս-  
կիզբն առնում՝ «աստւածային յայտնու-  
թիւնից», ինչպէս նաև միւս յայտնի կրօ-  
նական սիստեմները—հրեութիւնը, բուդդա-  
յականութիւնն ու մահմեդականութիւնը:  
Այդ վարդապետութիւնների հիմնադիրները  
նոյն վճռականութեամբ շեշտել են, որ իրենք  
ներկայանում են իբրև աստւածային առա-  
քեալներ, ինչպէս նաև քրիստոնէական կրօնի  
առասպելական հիմնադիրը: Եւ, ինչպէս  
յայտնի է, այն հարիւրաւոր միլլիոն հետե-  
ւողները, որ ունեցել են Բուդդայի, Կոն-  
ֆուկիոսի ու Մահմեդի վարդապետութիւն-  
ները, նոյնպէս համոզւած են, որ այդ վար-  
դապետութիւնների հիմնադիրները աստւա-  
ծային առաքեալներ են, ինչպէս և քրիս-  
տոնեանները Յիսուս Քրիստոսի վերաբերմամբ:  
Ես չեմ զբաղւել ինչպէս Դուք Զեր  
մասին էք ասում, Սոկրատից և Պիւթագո-  
րոսից մինչև Շոպենհաուէր, Ֆեյերբախ,  
Լասալ ու Մարքս փիլիսոփայական սիստեմ-  
ների ուսումնասիրութեամբ: Ի գէպ, վերջին  
երկուսի վերաբերեալ պէտք է նկատեմ: Որ  
նրանց մոքովն էլ չէ անցել փիլիսոփայական

սիստեմներ ստեղծել: Այսպիսով Լասալի ու  
Մարքսի փիլիսոփայական սիստեմները Դուք  
պէտք է ջնջէիք Զեր գիտական պաշարի դան-  
ձարանից: Բայց ես մի քիչ պարապմել եմ  
քաղաքակրթութեան պատմութեամբ և բնա-  
կան գիտութիւններով և գտնում եմ, որ  
մտածելու ընդունակ ու բնական գիտութիւն-  
ների հետազոտութիւններին ու գիտերին  
ծանօթ ուղեղի համար բաւական դժւար է  
հաւատալ քրիստոնէութեան, իբրև վարդա-  
պետութիւններից ամենալաւին ու ամենա-  
կատարեալին: Այն փաստերը, որ բնական  
գիտութիւնները հաստատել են երկրի ծագ-  
ման ու հնութեան, մարդու ծագման ու  
զարդացման մասին, քրիստոնէութիւնից խը-  
լում են այն հողը, որի վրայ կանգնած է,  
և նրան դէպի անկումն են տանում: Բացի  
այդ Զեզ նոյնպէս պէտք է շատ լաւ յայտնի  
լինի, ինչպէս և ինձ, որ քրիստոնէութեան  
ծագման ու զարդացման պատմութիւնը շատ  
էլ այնպէս չէ, որ վկայի այդ վարդապետու-  
թեան աստւածային ծագման մասին: Անթիւ  
շաղփաղփանքները, կորիւներն ու վէճերը  
նոյնպէս նաև փոխադարձ հալածանքները

գործադրւել են ամենատղեղ ձեռվ դեռ ա-  
ռաջին քրիստոնեաների ժամանակ: Եւ այդ  
բոլոր «առաքինութիւնների» մէջ աւելի ա-  
ջողութիւններ հենց նրանք են ունեցել,  
որոնք իբրև «եկեղեցու սպասաւոր և ու-  
սուցիչ» պէտք է բոլորովին հակառակ օրի-  
նակ տային:

Քրիստոս որի անձնաւորութիւնը բա-  
սական մշուշային է, որի վարդապետու-  
թեան ու խօսքերի մասին իր սեփական ձե-  
ռով զրած ոչ մի խօսք անգամ չկայ: Սկսւեց  
պաշտւել իբրև աստւածամարդ միայն եր-  
կար ժամանակ անց իր մահւանից յետոյ:  
Քրիստոսի հետեւողների մէջ ամբողջ գարեր  
շարունակ ձգձգւել է այս վէճը՝ հաւասար  
է, արդեօք, նա Աստծուն՝ թէ միայն նման  
է նրան:

Այս հալցը վճռւել է միայն 325 թ.  
Նիկիայի տիեզերական ժողովում: Այսոեղ  
երկու վիճող ուղղութիւնների ներկայացու-  
ցիները սկզբում ապացոյցների պակասու-  
թեան պատճառով փոխադարձ նախատինք-  
ներով ու յիշոցներով զբաղւեցին: Երբ սրա-  
նից ոչ մի բան չգուրս եկաւ՝ նրանք դիմե-

ցին ձեւական քաշքշելուն, որին և վերջ ի վերջոյ աջողւեց հաստատել երկուութիւնն ու միութիւնը Աստծու և Քրիստոսի: Այս ժամանակայ քրիստոնէական հովիւները ինչ էլ որ լինէր պէտք է Քրիստոսի ու Աստծու յարաբերութեան մասին որոշ հայեցք ունենային, որովհետեւ քահանաների մէջ եղած վէճը տարածւել էր նաև հօտի մէջ, սպառնարով մոլորութեան մէջ զցել աւելի առողջամխներին ու մտածողներին: Այս առաջին քոյլն էր քրիստոնէական եկեղեցին հիմնելու համար, այսինքն մասսաներին իշխող դասակարգերին հպատակեցնելու, որը և կատարեց քրիստոնեայ հոգեորականութիւնը:

Իբրև հակասութիւն արևեմուտքի քրիստոնէութեան՝ արևելքի քրիստոնեաների մէջ սկսեց զարգանալ աստւածային Երրորդութեան ուսմունքը, որը մենք հանդիպում ենք նաև մի քանի հին կրօնների մէջ, ինչ պէս՝ օրինակ՝ եղիպտացիների կրօնի մէջ: Այս բանը եկեղեցուն նոր վտանգ էր սպառնում: Եւ ահա 56 տարի անց, 381 թ. կ. Պօլսի տիեզերական ժողովում աստւածու-

թեան երկուութեան ու միութեան փոխարէն հաստատում է նրա երրորդութիւնը, ուր իբրև երրորդ անձ այդ աստւածային դաշնակցութեան մէջ ընդունում էր սուրբ Հոգին: Ահա Զեղ սուրբ երրորդութեան ծագման հասարակ, աստւածայնից չատ հեռու պատմութիւնը, քրիստոնէական եկեղեցու դումաներից այդ ամենակարևորինը: Համաձայնեցեք, պարոն քահանայ, որ ճիշտ մարդկային ծագումը, նման հենց նոր նկարագրածին, շատ քիչ է նպաստում քրիստոնէութեան աստւածային ծագման հաւատին: Միայն խոր տգիտութեամբ, ու աշխարհին, ընութեան և նրա երեսյթներին անծանօթութեամբ, որոնցով աչքի է ընկել և գժբախտաբար աչքի է ընկնում նաև այժմս մարդկութիւնը, կարելի է բացատրել այն, որ այսպիսով հաստատւած դոգմատը իր համար միլիոնաւոր հիտեռողներ է գտել: Մինչև այսօր այդ միլիոննաւոր հետեղների գոյութիւնը միայն նրա համար հնարաւոր եղաւ, որ տիեզերական ժողովներում հնարած եկեղեցու և պետութեան շահերին նպաստաւոր դոգմատները, որոնց առթիւ

այնքան վիճել ու կռւել են, այսպէս ասած,  
մոցրել Եին մարդկութեան զլուխների մէջ  
իբրև «աստւածային յայտնութիւն» և մօր  
կաթի հետ պատւաստել նրանց մէջ: Եթէ  
նոյն իսկ 19 դարի երկրորդ կիսին դեռ ևս  
գտնուում են հարիր հազարաւոր զլուխներ,  
որոնք յուզուում են պապի անսիալականու-  
թեան մասին նոր մշակւած դոգմայի առ-  
թիւ՝ ուրեմն չպիտի զարմանալ որ համա-  
րեա երկու հազարամեակի ընթացքում մարդ-  
կութեան մեծագոյն մասը կարող էր հաւա-  
տալ քրիստոնէութեան յայտնութիւններին  
ու հրաշքներին:

Նոյն բանը, ինչ որ պատահեց Սուրբ  
երրորդութեան հետ, որը հոգեորականու-  
թիւնն էր հնարել յետագայում պատահեց  
նաև սրբերի պաշտամունքի հետ: Առաջին  
դարում եկեղեցիներում ոչ մի նկար չէր  
թոյլատրուում: և կլփիրայի եկեղեցական ժո-  
ղովը հանդիսաւոր կերպով արզելեց «պա-  
տերի վրայ պաշտամունքի ու երկրպագու-  
թեան առարկաներ նկարելլ»: Եկեղեցու եր-  
կու նշանաւոր հայրեր, Եւսեբէոսն ու Քրի-  
զոստոսը, որոնք 390 թ. (Ք. Ճ. յ.) էին

ապրում՝ սրբի պատկերների—իկոնների գոր-  
ծածութիւնը կռւապաշտութիւն են համա-  
րում: Բայց յետագայում սրբերի երկրպա-  
գութիւնն ու իկոնների և սրբազան առար-  
կաների պաշտամունքը սկսւեց գործադրւել  
նոյն եռանդով, ինչպէս ամենամոլի «հեթա-  
նոսներն» էին կատարում: իսկ ներկայումս  
կաթոլիկների մէջ դա կոյլտ (պաշտամունք)  
է զառել:

Քրիստոնէական եկեղեցում այնքան  
տարածւած համրիչը (տէրողորմեան) նմա-  
նութիւն է հին եղիպտացիների ու բուդդա-  
յականների նոյն սովորութեան, այսինքն  
համրիչը գործ են ածել դեռ «հեթանոս-  
ները»:

Երեխաների մկրտութիւնը կատարւում  
էր հնումը իբրև կրօնական պատւէր միայն  
արեւելեան և գերմանական ազգերի մէջ:  
Միայն չողրորդ դարում է դա քրիստոնէա-  
կան հոգեորականութիւնը գործածութեան  
մէջ մոցրել իբրև «Աստծուց հաստատւած  
նորհուրդ»: Հաղորդութիւնը, որ հրէական  
կապայի տօնի քրիստոնէացումն է, իր ներ-  
կայ նշանակութիւնը նոյնպէս բաւական ուշ

է ստացել: 325 թ. (Ք. ծ. յ.) Նիկիայի ժուղում հաստատւած հաւատոյ հանդանակի մէջ դրա մասին մի խօսք անդամ չկայ: Յետագյում Հրէական պատրայի տօնը դարձրել են քրիստոնէական զատիկ:

Սատանայի հաւատը, որ այնքան մեծ դեր է խաղում քրիստոնէութեան և առանձնապէս բողոքականութեան մէջ և որը 16 և 17 դարերում վհուկների ամենայուղիչ այրման պատճառ եղաւ, նոյնպէս Հին «Հեթանոսական» կրօններից է վերցրած:

Հանդերձեալ կեանքի հաւատը — նոյնպէս քրիստոնէական դաղափար չէ: Այս հաւատը տարածւած է եղել բոլոր Հին զարգացման աւելի կամ պակաս բարձր առտիճան: Վրայ կանգնած ազգերի մէջ: Քրիստոնէութիւնը միայն ընդունել է այդ և որոշ չափով փոփոխել ու զարգացրել: Մահւանից յետոյ կեանքի շարունակութեան դաղափարը եղել է դեռ Հին յոյների մէջ (տես Հոմերոսի երգերը), նոյնպէս և Հին գերմանների մէջ (կեանքի շարունակութիւնը Վալդայում): Սոկրատի ժամանակներից սկսած յունական փիլիսոփայութիւնը դարս

դացնում էր այդ հաւատը միաստւածութեան դաղափարի հետ միասին՝ հակառակ բազմաստւածութեան: Նոյնը պատահել է նաև այսպէս կոչւած «ահեղ դատաստանի» կամ «դատաստանի օրւայ» հետ, որը յիշում է պարսիկների «սրբազնութեան» զրբեմէջ Քրիստոսի ծննդից դեռ շատ առաջ:

Բարձրագոյն էակի առաքեալի միջոցով մարդկութեան փրկութիւնը, որ քրիստոնէութիւնը իր Հիմնադրին է վերագրում նոյնպէս քրիստոնէութեան առանձնայատկութիւն չէ: Դեռ 4 դարում Քրիստոսի ծնաւում այդ բանը քարոզել են Բուդդան ու Զրադաշտը և նոյն իսկ Սոկրատը ակնարկում է այդ:

Հենց նոր մենք ցոյց տւինք, որ այն ամենակարևոր զոգմաններն ու ծէսերը, որոնց վրայ հանդչում է քրիստոնէութիւնը, սա փոխարինել է «Հեթանոսութիւնից», նոյնը կարելի է ասել նաև քրիստոնէութեան ու յատկապէս կաթոլիկութեան աստւածպաշտութեան ձեերի մասին: Ամենուրեք մենք «Հեթանոսութեան» նմանութիւնն ենք տեսնում: և ոչ մի տեղ ինքնուրոյն, ինքնատիպ

գաղափարի հետքն անզամ չենք դժուռմ։  
Յոյների ու հոռմայեցոց զոհի սեղանը, որոնք  
նոյնպէս իրենց բոլոր ծէսերը եղիպտացի-  
ներից են փոխ առել դարձել է քրիստո-  
նէական եկեղեցու սեղան։ Քարոզական ա-  
թոռը դարձաւ քրիստոնէական ամֆիոն։ Քա-  
հանայական զգեստաւորութիւնների զոյնն  
ու ձեւերը նոյնպէս եղիպտացիներից են փոխ  
առւած։ Եղիպտական Օրւայ-Օղիրիսի աս-  
տւածութեան զոյները—կարմիրն ու ձեւ-  
մակը և եղիպտական հոգեորականութեան-  
երկար զգեստները այժմ էլ են գործածում։  
Քրիստոնէութեան բոլոր դաւանանքների  
սրբակրօնները։ Դատող Օղիրիսի գայիսոնը  
դարձել է քրիստոնէական եպիսկոպոսի զա-  
ւազան։ իսկ Գիշերւայ-Օղիրիսի քրմերի զիխի  
եղջիւրաձև զարդից ստացւել է քրիստոնէա-  
կան խոյրը։ Նոյն իսկ կաթողիկ քահանա-  
ների տռնզուրան\*) եղիպտացիների աստւած։

\*) Տռնզուրան այն սովորութիւնն է, որ  
կաթոլիկութեան մէջ հոգեոր աստիճան ստա-  
նալու համար գլխի մի մասը շրջանաձև խո-  
գում էն։

պաշտութիւնից է փոխ առւած։ Դա արե-  
գակի ճաճանչափայլ աստծու, Օզիրիսի խոր-  
հրդանշան է եղել։ Օրհնած ջուրը, անու-  
շահոտութիւններ ծխելը և մեռոն քսելը։  
քաժակը (սկիհ), երաժշտութիւնն ու եր-  
գեցողութիւնը, աղօթքի ժամանակ ծունդա-  
դրութիւնը, Սուրբ Սուրբի ժամանակ խորին  
ողջոյնները և հերթով երդելը (անտիֆոն),  
մի խօսք բոլորը, բոլոր ձեւերն ու ծէսերը,  
որոնք ներկայումն էլ այնքան մեծ գել են  
խաղում քրիստոնէական եկեղեցու մէջ,  
բոլորը առանց բացառութեան եղիպտական  
հեթանոս աստւածալաշտութիւնից են վեր-  
ցրած։

Նոյն ձեռվ և Արեգակի Որդու ծնն-  
դեան տօնը ժամանակով դարձել է Քրիստոսի  
ծննդեան տօն։ Կրտկին նւիրած հին-հեթա-  
նոսական ամառայ տօնը քրիստոնէաների  
մէջ Յովհաննէսի տօն է գառել, իսկ սիրի-  
ական գարնան տօնը, կամ հրէական տա-  
գաւարների տօնը փոխարինւել է ս. Միքա-  
յէլի տօնով։ Որ ապա գերմանների յուլի-  
սեան տօնը եղիպտացիների Արեգակի Որդու  
ծննդեան տօնի հետ յետազայում դառել

Են քրիստոնէական Ծննդեան տօն՝ այդ նոյն-  
պէս շատ լաւ յայտնի է:

Հեթանոսական ու քրիստոնէական կրօ-  
նական սովորութիւնների նմանութիւնը ա-  
ւելի մեծ է: Եղիպտացիների Արեգակի Որ-  
դու գեղարւեստական պատկերը միանգա-  
մայն համապատասխանում է յետագայում  
քրիստոնէական Յիսուսի պատկերին: Խոնար-  
հած գլուխը, տիկանման մազերը, դէմքի  
հեղ արտայայտութիւնը, գլխի շուրջը ըն-  
կած ճառագայթաձև պսակը օրհնող ձեռ-  
ները—յատուկ նշաններ են՝ թէ մէկի և թէ  
միւսի: Եղիպտացիների Երկնքի աստւածու-  
հին, Իզիդան Արեգակի Որդու հետ միան-  
գամայն համապատասխանել է քրիստոնէա-  
կան Սուրբ Կոյսին—ճակատի շուրջը ճառա-  
գայթափայլ պսակով կամ աստղերով և մա-  
նուկ Քրիստոսը ձեռներին կամ ծնկներին:  
Հարաւային Գերմանիայի մի քանի աեղերում  
այժմ էլ կարելի է հանդիպել մավրիտանու-  
հու պատկերով նկարած Աստւածամօր—որ  
Եղիպտա-աֆրիկեան աշխարհայեացքի հետ  
ունեցած ցեղակցութիւնն է ցոյց տալիս:  
Որովհետեւ քրիստոնէական վարդապե-

տութիւնը ոչ այլ ինչ է, բայց եթէ հին,  
Սոկրատից սկսած մինչեւ Պղատոն, փիլի-  
սոփայական հայեացքների վերջնական եղ-  
բակացութիւն: ուստի և աստւածպաշտու-  
թեան ձեւերն էլ, որ ներկայումս առանձնա-  
պէս կաթոլիկներն են գործ ածում: համա-  
րեա ամբողջութեամբ հեթանոս աստւած-  
պաշտութեան ծէսերից ու խորհրդանշան-  
ներից են վերցրած: Այսպիսով քրիստոնէ-  
ութիւնը, ինչպէս և ամեն մի կրօն, ներկա-  
յանում է լոկ իրրե ապրած քաղաքակր-  
թական շրջանի հոգեոր տականք, որի հա-  
մար մինչեւ այդ, զոյու թիւն ունեցող կրօն-  
ները արդէն անց են կացրել իրենց դարը:  
Նա մարդկութեան ստեղծածն է, ոչ աւել  
ոչ պակաս: Նա կազմել ու զարգացել է այն  
երկրների բարքերի, սովորութիւնների ու  
առաջւայ կրօնների ուղղակի և անմիջական  
ազգեցութեան տակ, ուր նա մտել է: Հա-  
յաստանում լուսնի աստւածուհու, Արտե-  
միսի\*) տաճարը նրա արձանը խորտակելուց

\*) Կարծում ենք, որ Աշտեշատի Անահատի  
տաճարի մասին է Խոսքը:

յետոյ դարձրին քրիստոնէական տաճար և վիեսոսում Դիանայի հեթանոսական տաճարը դարձրին ս. Յովհաննէսի եկեղեցի. իսկ Հռոմում ս. Պետրոսի եկեղեցում մինչեւ այժմ էլ գեռ համբուրում են իւլիտերի քրոնզէ արձանի ոտքը, որի մասին հոգեւորականութիւնը պնդում է, թէ նա ս. Պետրոսին է պատկերացնում:

Քրիստոնէութեան առաւելութիւնը միւս կրօնների նկատմամբ նրա մէջ են տեսնում, որ նա միասուածութիւն է քարոզում, մի Աստծու, որը միաժամանակ իր մէջ միացնում է Անբաժան Երրորդութիւնը—մի բան, որ միանգամայն անըմբոնելի է մարդկային առողջ մոքի համար: Բայց այս էլ ոչ այլ ինչ է, բայց եթէ միւթու—առասպել: Հրէաները գեռ Ք. Տ. 500 տարի առաջ ընդունում էին Սուրբ Երրորդութիւն, որ միանում էր մի Աստծու անձի մէջ. Քրիստոսի ծն. շատ դարեր առաջ նման հաւատ մենք գտնում ենք եղիպտացիների մէջ: Համարեաիւրաքանչիւր քրիստոնէական դաւանանք, իւրաքանչիւր եկեղեցական ծէս Քրիստոսից ամբողջ դարեր առաջ կիրառել է հնդկա-

ցիների ու եղիպտացիների հեթանոսական կրօնների մէջ, այնպէս որ մենք կատարեալ իրաւունքով կարող ենք ասեր որ քրիստոնէութիւնը այդ երկու հին կուլտուրական երկների կրօնների միայն մի կտորն է: Սակայն քրիստոնէական եկեղեցու ոչ միայն դաւանանքներն ու ծէսերն են մարդու գործ, ինչպէս նոր ասացինք, և երբեք «Աստծու գործ», — այլ նոյնը կարելի է ասել նաև «սուրբ» զրքի մասին, որի վրայ հիմնւում է քրիստոնէութիւնը:

Աստւածաշունչը՝ իբրև կուլտուրա-պատմական զրւածք՝ մեծ նշանակութիւն ունի. բայց կուլտուրա-պատմական արժեքի տեսակէտից նրա վրայ մինչեւ այժմ շատ քիչ են ուշադրութիւն դարձել: Եկեղեցին էլ նրա վրայ երբեք չի նայել իբրև այդ տեսակի երկի վրայ, այլ—միայն իբրև աստւածային յայտնութեան արդիւնքի: Իսկ իբրև այսպիսին Աստւածաշունչը — ինչպէս մի գելք, որ ընդգրկում է հին կուլտուրական գարգացման մատ երկու հազարամետակ զանազան դէպքեր է նկարագրում և իր մէջ շատ աւանդութիւններ պարունակում ու

բոնք տարբեր ժամանակների ու տարբեր հայեացքների մարդկանց են վերաբերումն ընականաբար լի է ամենակոպիտ ու անվճութիւնիններով:

Աստւածաշնչի կամ այսպէս կոչւած սուրբ գլուխ այդ անորոշութիւններն ու հակասութիւնները նրա հազար ու մի կերպ մեկնութիւնների պատճառ և ամենասուր ընդհարութների ու հերձւածների հիմք են եղել և են եկեղեցու մէջ, որոնք մինչև այժմ էլ շարունակւում են: Յոյց տւած անորոշութիւններն ու հակասութիւնները վազուց արդէն բաժանած կինէին կաթոլիկ, ինչպէս և աւետարանական եկեղեցին բազմաթիւ աղանդների, եթէ հոգեորականութիւնը կառավարութեան հետ միասին ուժի օգնութեամբ չպահպանէր մի անգամ ընդգունած ուսմունքների անձեռնմխելիութիւնը:

Ուստի կաթոլիկ եկեղեցին իր հայեցակէտով միանդամայն լաւ է անում, որ աշխարհականներին արդելում է աստւածաշունչ կարդալ: Եթէ նոյն իսկ գիտնականները չեն կարողացել աստւածաշնչի բովան-

դակութիւնը մեկնաբանելիս մի համաձայնութեան գալ՝ էլ ի՞նչպէս կարելի է այդ պահանջնել հասարակ մարդու մտքից: Ոչ մի գիրք այնքան մարդկանց գժատուն չի տարեր որքան աստւածաշունչը: Խեղճ ցնորողները նրա մէջ այն էին փնտրում՝ ինչ իրապէս չկար, և երբ նրանց թւում էր, որ իրենք վերջապէս գտել են ճշմարտութիւնը, նորից այնպիսի մի տեղ էին ընկնում: Որ հակասում էր առաջնին և նրա հետ համաձայն չէր:

Եւ այդպէս ս. գիրքը «Աստծոյ շունչ—Խօսք» լինել չի կարող. այդ գիրքը նրանք չեն գրել որոնց անունները կրում են դրա առանձին մասերը: Ս. գիրքը զանազան մարդկանց գրւածքների ժողովածու է, որոնց անունները երբեք նոյն իսկ յայտնի էլ չեն եղել և որոնք բոլորովին աարբեր ժամանակներում են ապրել: Այն գրւածքների թիւը, որ Քրիստոսի կեանքի ու վարդապետութեան իսկական ու ճշգրիտ նկարագիր լինելու պահանջն են անում: շատ մեծ էր: Առաջին դարում (Ք. ծ. յ.) այդ գրւածքների ճշմարտութեան ու արժեքի մասի

ծագել են ամենասուր վէճեր ու կոիւները Միայն հետզհետէ զանազան տիեզերական ժողովները աջողեցին որոշ միութիւն ստեղծել, որի ժամանակ ստոյդ լինելու և շինելու վրայ ուշադրութիւն չդարձրին և այդ դրւածքներից շատերը, եթէ դրանք չեն համապատասխանում նոր կեանքի պայմանաներին, հերքում կամ ոչնչացւում էին իսկ միւսները միանում էին մի ընդհանուր վերնագրի տակ: Այսպիսով՝ վէճերի ու կըռոիւների ամբողջ դարերից յետոյ ս. գիրքը դարձաւ հաւատի անփոփոխելի մի գիրք, «Աստծոյ շունչ», որի ճշմարտութեան ու իսկ կութեան վրայ կատածելը դեռ վերջերս մեծ յանցանք էր համարւում և նոյն իսկ պատժւում պետական օրէնքներով:

Ստոյդ քննութիւնները ցոյց են տւել, որ աւետարանի մեր ունեցած ձեռագրերից ու առաքելական թղթերից և ոչ մէկն անզամ չեր կարող Քրիստոսի ծննդից յետոյ 4 դարոց առաջ գրւած լինել<sup>\*)</sup>): Գտնւածէ,

<sup>\*)</sup> Մինչեւ մեզ սովորեցնում են, որ դրանք գրւած են 60—120 թ. Քո. Ճ. Յ. Ֆ.

որ նոր և հին կտակարանի շատ կարե որ տեղեր յաւելումներ են, որ ինքնազլուխ վերցրած են զանազան հեղինակներից և յարմարեցրած հոգեւորականութեան շահերի ու ցանկութեան համաձայն, և ապա քարոզւել են հաւատացեալներին իբրև «Աստծոյ շունչ», Աստծոյ խօսք: Ս. գրքի բոլոր ունեցած ձեռագրերի համեմատութիւնը ցոյց է տւել 50,000 աւելի շեղումներ ու հակասութիւններ: Շնորհիւ դրան ս. գրքի մի քանի շատ կարեւոր տեղեր բոլորովին այլ իմաստ են ստանում: Բայց և այնպէս, չնայած դրան ս. գիրքը «Աստծոյ շունչ» է, որը ոչ ոք քըննագատութեան ենթարկելու իրաւունք չունի (>):

Համաձայնւեցէք, պարոն քահանայ, որ նոյն իսկ եթէ բոլոր վիլիսոփայական սիստեմները անկարող են քրիստոնէութեան ստաւածային ծագում ունենալու հաւատը խախտել՝ ապա իմ ցոյց տւած պատմականօրէն հաստատւած փաստերը բաւական են հաւատացող սրաերի մէջ կասկած զցելու համար: Այս բոլոր ասածներս նկատի ունենալով Դուք, հաւանօրէն,

չեք գարմանայ, եթէ խոստովանեմ, որ ոչ  
միայն կաթոլիկութեան, այլ և առ հասարակ  
ամեն կրօնի հակառակորդ եմ ես:

Կրօնը, ինչպէս վերեռւմ ցոյց տրւեցր  
զարգացման մօտաւորապէս նոյն աստիճանի  
վրայ կանգնած մի կամ մի շարք ժողովուրդա-  
ների կուլտուրական վիճակի արդիւնք է:  
Նոյն իսկ միենոյն կրօնը տարբեր ժողո-  
վուրդների մէջ տարբեր բնաւորութիւն է  
ստանում, եթէ նրանց քաղաքակրթութեան  
աստիճանն ու հոգեւոր զարգացման սահման-  
ները միատեսակ չեն: Օրինակ՝ Սպանիայի  
կաթոլիկութիւնը էապէս տարբերւում է  
Ֆրանսիայի կաթոլիկութիւնից, նոյնը կա-  
րելի է ասել նաև բողոքականութեան մասին  
Անգլիայում ու Գերմանիայում: Բայց այդ  
ժողովուրդի կրօնի փոփոխելու վրայ ազ-  
դում է նաև նրա քաղաքակրթութեան  
բարձրանալը: Այսպէս 19 դարու բարեպաշտ  
քրիստոնեաները կասկածի են ենթարկում  
շատ բան այն ամենից, ինչի այնպէս հաս-  
տատ հաւատում էին 15 դարու քրիստո-  
նեաները: Յիշենք, օրինակի համար, թէ ինչ

գեր է խաղացել 16 և 17 դարերում սա-  
տանային ու վհուկներին հաւատալը:

Բայց կրօնական դոգմաներն ու ուս-  
մունքները աւելի ու աւելի կխախտւին,  
որքան որ բնական դիտութիւնների ու կու-  
տուրա - պատմական հետազօտութիւնների  
արդիւնքը աւելի ու աւելի մեծ շրջանի  
մարդկանց մատչելի կլինի: Երկրի պատմու-  
թեան հետ ծանօթանալը բոլորովին ոչնչա-  
ցնում է աշխարհի ստեղծագործութեան  
աստածաշնչի առասպելները, իսկ աստղա-  
բաշխական հետազօտութիւններն ու գիւ-  
տերը ցոյց են տալիս մեզ, որ տիեզերքը «եր-  
կինք» չունի (ինչպէս այդ քրիստոնէութիւնն  
է նկարում) և որ միլիոնաւոր աստղերը՝  
բոլորը առանց բացառութեան՝ երկնային  
մարմիններ են, որոնք երբեք չեն կարող հը-  
րեշտակների ու «սրբերի» վայր լինել:

Այսպէս ուրեմն, արդէն բաւականաչափ  
ապացուցեցինք, որ քրիստոնէութիւնը ոչ  
միայն վարդապետութիւններից «ամենալա-  
ւագոյնն» ու «ամենակատարելագոյնը» չէ, այլ  
և որ նա մնացած բոլոր կրօններից լաւա-  
գոյնն ու կատարելագոյնը չէ, այսինքն, որ

նա անբաւարար ու անկատար է։ Մարդկութեան առաջադիմութեան տեսակէտով դրան վերացնելը աւելի ու աւելի մեծ անշրաժեցութիւն է դառնում։ իսկ քրիստոնէութեան բարոյականութիւնը, կրացականչէք Դուք։ Բարոյականութիւնը (մարալ) ոչ մի առնչութիւն չունի ոչ քրիստոնէութեան, ոչ էլ առ հասարակ կրօնի հետ։ Մարդկարին քաղաքակրթութեան տարբեր աստիճանների վրայ բարոյականութիւնն էլ բոլորովին տարբեր է լինում։ Բոլոր ազգերն էլ մարդկանց իրար հետ ունենալիք յարաբերութիւնների համար որոշ կանոններ ունին, որոնց պահպանելը յօդուա բոլորի շահերի անշրաժաւութ է համարում։ Առանց այդպիսի կանոնների ոչ մի հասարակութիւն չի կարող գոյութիւն ունենալ։ Դրանց խախտելը անբարոյական բան է համարում և առաջացնում է կամ միայն դժոհութեան արտայայտութիւն երրորդական անձերի կողմից կամ էլ նիւթական ու մարմնական պատիժ, որ յանցաւորին տալիս են հասարակութեան իշխանութիւնները։ Թէ որքան տարբեր են լինում որոշ սովորութիւններ նոյն իսկ կաշ-

թոլիկ եկեղեցու սահմաններում, երբ մարդկանց մի մասը դրանց վրայ նայում է իբրև միանգամայն բարոյական ու բնական երեւոյթների վրայ, իսկ միւսը—իբրև անբարոյական երեւոյթների, ուստի արհամարհանքի արժանի, կարող են հետեւալ երկու օրինակները ցոյց տալ։ Այն հայեացքը, թէ ամուսնութիւնը նոյն իսկ առանց եկեղեցու օրհնութեան միանգամայն վաւերական է, Փրանսիացի կաթոլիկը ճշմարիտ է համարում։ իսկ աստւածավախ գերմանացի կաթոլիկը այդպիսի ամուսնութեան վրայ իբրև կոնկուրինատի (ապօրինի կենակցութեան) վրայ է նայում։ ուրեմն և իբրև մի անբարոյական գործի վրայ։ Եկեղեցին պետութիւնից բաժանելը հիւսիս-ամերիկացի կաթոլիկը ըստ ինքեան հասկանալի է զտնում։ իսկ գերմանացի կաթոլիկների մեծամասնութիւնը զրա վրայ նայում է, իբրև պետութեան կողմից եկեղեցուն ամօթալի դաւաճանութեան վրայ։ Սիրոյ պատւիրանը դէպի մերձաւոր, դէպի ամբողջ մարդկութիւնը, երկուստեք ժուժկալութեան պատւիրանը—այս բոլոր ուսմունքները առանց բացառութեան

կան ինչպէս բուդգայականութեան, այնպէս  
էլ մահմեդականութեան մէջ։ Այդ ընդու-  
նում են այն բոլոր ազգերը, որոնք զար-  
գացման որոշ աստիճանի են հասել, և իրա-  
կանութեան մէջ հնդկացիները, չինացիները,  
պարսիկներն ու արաբները աւելի շատ են  
գործադրում՝ քան քրիստոնեաները, որոնք  
այդ բոլոր լաւ բաները աշխատում են պա-  
հել միայն «ապագայ կեանքի» համար։ Քրիս-  
տոնէական կրօնը, սիրոյ այդ կրօնը 18 դա-  
րուց աւելի բոլոր հաւատացեալների ու մը-  
տածողների համար ատելութեան, հալա-  
ծանքների ու ծնշումների կրօն է եղել։ Ոչ  
մի կրօն աշխարհումս մարդկութեան այն-  
քան արցունքների ու արեան պատճռ չի  
եղել՝ որքան քրիստոնէականը, ոչ մէկը ամե-  
նազդելի տեսակի յանցանքների այնքան  
առիթ չի տւել։ Իսկ երբ գործը հասնում է  
կռւի կամ ամբոխային սպանութեան՝ բոլոր  
քրիստոնէական դաւանանքների քահանա-  
ները այժմ էլ պատրաստ են տալու իրենց  
օրհնութիւնը, և մի ազգի բոլոր հոգեւորա-  
կանութիւնը ձեռները երկինք է բարձրա-  
ցնում։ որպէս զի միւնոյն Աստծուց, Սիրոյ

Աստծուց իրենց թշնամու—միւս ազգի ոչըն-  
չանալը աղերսեն։

Եթէ եկեղեցին այժմ չի ճնշում այն  
չափով, ինչպէս առաջ, զրա համար ոչ թէ  
քահանաներին, ոչ թէ եկեղեցու սպասա-  
ւորներին ենք պարտական, այլ մարդկու-  
թեան ընդհանուր առաջադիմութեան, որ  
յաղթող հանդիսացաւ՝ չնայած քահանա-  
ներին ու եկեղեցուն, և հակառակ նրանց  
Դուք ասում եք, որ չի կարելի կրօնին նա-  
խատել եկեղեցու առանձին սպասաւորների  
գործերի ու արարքների համար։ Այս գե-  
րապատելին իսկ եթէ այդ սրբակրօնները  
ոչ թէ իբրև բացառութիւն, այլ իսրեւ կա-  
նոն հին ժամանակներից մինչև այժմ կա-  
տարելապէս ոչ մի ուշադրութիւն չեն գար-  
ձնում կրօնի բարոյական կանոնների վրայ։  
— որոնք, ես այս երկրորդ անդամ եմ ընդ-  
գծում համարեա ոչ մի առնչութիւն չու-  
նեն կրօնի հետ—և ընդհակառակը օրէցօր  
մեղանցում են նրանց գէմ ուրեմն էլ քանի  
կոպէկ արժէ այդ կրօնը։ Հաւատացողներից  
աւելի մոլեռանդները, երբ նրանք երևակա-  
ցնում էին՝ թէ բարի են գործում։ Միմիայն

վնասել են մարդկութեան, որովհետև դաւանանքին ամեն մի գիպչելու մէջ նրանք հերետիկոսութիւն էին նկատում, կրօնի հիմքերի իւրաքանչիւր կասկածանքի մէջ մեծ յանցանք էին տեսնում և մոլեզնում էին դրանց դէմ հրով ու օրով: Խաչակիր արշաւանքները, կրօնական անթիւ հալածանքները, ինկվիզիցիան (հաւատաքննութիւնը խարոյկով), հրեաներին հալածելը վհուկների գործողութիւնները, որոնց ժամանակ հարիւր հազարաւոր մարդիկ զոհւում էին անմիտ կուրութեան, առաջ են բերել ու բորբոքել մոյեռանդ սրբակրօնները, նրանցից ամենախելօքներն ու ամենասառնարիւնները եկեղեցու հզօրութիւնը տարածելու համար, —ուրիշ խօսքով, իրենց հզօրութիւնը —և յաճախ էլ աջակցել են դրանց միմիայն թալանի համար:

Քրիստոնէութիւնը թշնամի է ազատութեան ու քաղաքակրթութեան: «Բարձրագոյն իշխանութիւններին» իր կրաւորական հնագանդութեան վարդապետութեամբ, որովհետեւ «Աստծուց են նշանակւած», տան ջանքներին համբերելու և դրանց համար

ներելու իր քարոզով! —մի քարոզ՝ որ հաստատում է այն խոստումով՝ թէ բոլոր նեղութիւնների համար որ այստեղ երկրի վրայ կրում ենք, վարձատրութիւն կտրւի մի այլ կեանքում քրիստոնէութիւնը շեղել է մարդկութիւնն իր նպատակից —կատարելագործելու ամեն կողմով, ձգտելու բարձրագոյն գարգացման, ուրախանալու ու բաւականութիւն ստանալու արդէն ձեռք բերած բարիքներից: Քրիստոնէութիւնը մարդկութիւնը ստրկութեան ու ձնշման մէջ է պահել, ներկայումն էլ դա քաղաքական ու ցիալական ձնշման համար ամենալաւ գործիքն է: Յունական ու հռոմէական քաղաքակրթութեան անկումից յետոյ քրիստոնէութիւնը Եւրոպայում հաղար տարուց աւելի է իշխել և այդ բոլոր ժամանակը ժողովարդների վրայ ծանրացած է եղել ամենակոպիտ բարբարոսութիւնն ու տգիտութիւնը: Մաւրերի ու արաբների իշխանութեան ժամանակ Սպանիան երկրագործութեան, արհեստների, արւեստների ու գիտութիւնների ամենաբարձր ծաղկման հասաւ, և ամբողջ երկիրը լիութեան մէջ էր

ապրում։ Այդ նոյն ժամանակում, այսինքն այդ «Հեթանոսների» իշխանութեան ներքոյ, քրիստոնեաներն ու հրէաները այնտեղ հաւատի կատարեալ հանգուըժողութիւն էին վայելում, մի բան որ գոնէ հրէաների նկատմամբ հազիւ է իրագործւած, այն էլ շատ մօտ ժամանակում մեր ամենաքաղաքակիրթ պետութիւններում։ Բայց հենց որ քրիստոնէական սուրբ, սրերից ամենաարիւնաբուն նեղեց մաւրերին, և քրիստոնէութիւնը սկսեց թագաւորել միշխան կերպով։ Սպանիան մոլեռանդութեան ու կրօնական հայածանքների բուն դառաւ։ Ծաղկած քաղաքներն ու գաւառները անապատներ դառնան, արաբական գիտութեան փայլը չքայաւ, և երկիրը քաղաքակրթական այնպիսի անբարեյածող պայմանների մէջ գցւեց, որոնց պատճառով մինչեւ այժմ էլ ոչ մի կերպ չի կարողանում կանոնաւորւել<sup>\*)</sup>։ Դիտութիւն-

<sup>\*)</sup> Պըոֆ. Մառը իր Անիի մասին դասախոսութեան մէջ հետեւեալ մտքելն է արտայայտել. «Նախաքրիստոնէական շրջանում Հայաստանում քաղաքակրթութեան աւելի փառա-

ների ու արւեստների զարգանալը, որ իտալիայում 12 դարում է սկսւել, իսկ Գերմանիայում 15, ոչ մի դէպքում չի կարելի քրիստոնէութեան վերագրել։ Դա հետեւանք էր հեթանոսական հինգասական գրականութեան ուսումնասիրութեան, որը հանւեց աղբի ու փոշու տակից, ուր նրան թաղել էր քրիստոնէութիւնը։ Այդ գրականութիւնը՝ եկեղեցական հալածանքների ու ամեն տեսակ արգելքների ջգրու՝ նորից աշխարհ գալով սկսեց մարդկանց աւելի մեծ շրջանների մէջ թափանցել և մարդկութիւնը ա-

հեղ արտայայտութիւններ ենք տեսնում և հայ ժողովրդի մէջ աւելի մեծ չափով տեսնում ենք աշխարհիկ, հումանիստական ոգի։ Քրիստոնէութիւնը հարւած հասցրեց այդ լուսաւոր կողմերին, մտցրեց կաստայական կղերական ոգի, ամենանեղ դաւանամոլութիւն, կոնֆէսիոնալիզմ» (Ալեք)։

— «Քրիստոնէութեան մուտքը Հայաստանում մեծ վնասներ հասցրեց երկը կուլտուրական զարգացման, մտաւոր շարժման, նաև կառեցրեց, ետ պահեց այդ շարժման առաջադիմական ընթացքը» (Աշակ)։ Ծ. Փ.

ռաջադիմութեան (պրոգրեսի) ճանապարհի վրայ դրեց: Իսկ կրօնը միայն մի միջոց է եղել ամբոխի վրայ իշխանութիւն ձեռք բերելու և այդ տւելի ու աւելի հաստատուն գարձնելու:

Որ զանազան ժամանակների նշանաւոր ու հեռատես մարդիկ (Արիստոտէլ՝ Մաքիավելի) կրօնի վրայ նայել են լոկ իրեն սպատակին հասնելու մի միջոցի վրայ՝ ես արդէն ցոյց եմ տւել իմ բրոշեւրի մէջ: Խակ այստեղ ես աւելորդ չեմ գտնում յիշեցնել եկեղեցական մի քանի հեղինակութիւնների կարծիքների ու դործերի մասին: Սինեղիոս Եպիսկոպոսը 410 թ. (Ք. Ճ. Ա.) ասել է. «Ժողովուրդը զրականօրէն պահանջում է, որ իրեն խարեն, այլ կերպ նրա հետ զործ տեսնել չի կարելի . . . ինչ վերաբերում է ինձ՝ ես միշտ փիլիսոփայ կը ինեմ միայն ինձ համար, իսկ ժողովրդի համար միայն քահանայ», իսկ այս նշանակում է՝ խարեբայ: Մօտաւորապէս նոյնն է զրել նազեանցի Գրիգորը (Աստւածաբանը) երենիմոսին. «Հնարովի բաներ շատ են պէտք, որպէս զի ամբոխի վրայ տպաւ որութիւն

թողնենք: Որքան նա քիչ է հասկանում, այնքան աւելի է յափշտակւում: Մեր հայրելն ու ուսուցիչները միշտ չեն այն ասել, ինչ մտածել են, այլ այն, ինչ նրանց բերանն էին դնում հանդամանքներն ու կարիքները»: Յուլիոս II պապի թագաւորութեան ժամանակ (1475—1513) Հռոմի վեհարանում այնպիսի մի կեանք էր իշխում: որ գերազանցում էր անառակութեան, անբարոյականութեան ու աստւածահայհոյութեան բոլոր կարելիութիւնները: Երբ բարեպաշտ Գերմանիայից դրամական մեծ զոհողութիւններ էին դալիս՝ պապը ասաց իր կարգինաներից մէկին հետևեալ յիշատակութեան արժանի խօսքը. «Տես Է՛ եղբայր, ախար Յիսուս Քրիստոսի էդ առակը արգիւնաւոր քան է եղել»: Թէ ինչպէս էր գնահատում Փրանսիացի դեսպանը 16 դարում Պօղոս III պապի ժամանակի վարքերը՝ այդ ցոյց է տալիս նրա իր արքունիքին ուղղած նամակի այս կտորը. «Պապն ու իր նախարարները (կարգինալները) մինչև այժմ ամեն կերպ խարել են Զեզ, հիմա էլ նրանք ուշ զում են շողոքորթութեան ու լիրք ստի

գիմակի տակ թաքնւել որպէս զի իսկական ստորութիւն կատարեն»։ Սպանիական Սիւ կիլիայի ու Նեապոլի վրայ յարձակւելու համար սպանիացի բարի կաթոլիկների հետ պատերազմելիս Պօղոս VI պապը իրեն օդութեան կանչեց ոչ միայն բողոքականներին, այլ և քրիստոնեաների հնադարեան թշնամիներին—թուրքերին։ Աղեքսանդր VI պապը իստոնակւում էր իր սեփական ազնիայ, յայտնի պոռնիկ Լուկրեցիս Բորջիայի հետ։ Մի անգամ երբ նա մի խնճոյքում ուզում էր եօթ կարդինալների թունաւորել՝ սրանք իմացան այդ, կաշառեցին խոհարարին և հարկադրեցին սրան թունաւորել հենց իրեն պապին որդու հետ բացի աղջկանից պապը, որ ամուսնացած էր, մի որդի էլ ունէր։

Դուք հերքում էք իմ այն մտքի ճըշմարտութիւնը, թէ եկեղեցին ու պետութիւնը եզրայրաբար միանում են իրար հետ ամեն անգամ երբ պէտք է ճնշել ժողովրդին, բայց միանգամայն մոռանում էք դրագեմ ապացոյցներ բերել։  
Եթէ որ և է պետութիւն պէտք է որ

մի օրինակելի քրիստոնէական պետութիւն դառնար՝ դա ի հարկէ Հռոմը պէտք է լինէր, որ գտնւում էր պապի ու բարձր հոգեւորականութեան անմիջական կառավարութեան ներքոյ։ Իսկ մինչդեռ ի՞նչպիսի պատկեր էր ներկայացնում այդ եկեղեցական պետութիւնը մինչեւ իր գոյութեան վերջին օրը։ Ամենատխուրը, որպիսին միայն եւրոպայում կարելի էր գտնել։ Բնակչութիւնը ամօթալի կերպով սնոտիապաշտութեան ու տղիտութեան մէջ զցած ու ընկլմած, աշխատանքը ընկած ու ճնշւած, որի շնորհիւ ամօթալի մուրացկանութիւնն ու ընդհանուր սարսափելի աղքատութիւնն են իշխում։ Յանցանքների թիւը աւելի են, քան որ և է մի այլ պետութեան մէջ աշխարհում կատարեալ անապահովութիւնը նոյնիսկ առած էր գառել, իսկ զէպի մերձաւորը քրիստոնէական սիրոյ պատէրը, որ ամենից առաջ պէտք է այլակրօնների հանդուրժողութեամբ արտայայտէր, ոտնակոխ էր եղել։ Եւ առքրիստոնէական պետութեան օրինակն է։ Բոլոր եւրոպական պետութիւններում ուրեկեղեցու ներկայացուցիչները—անխափիր լինի

նա կաթոլիկ՝ թէ բողոքական—պետական կառավարութեան, կամ ժողովրդական ներկայացուցութեան մէջ վճռող ձայն են ունեցել՝ ամենուրեք նրանք իրենց ազգեցութիւնը դործ են դրել ժողովրդին թշնամի իշխանութիւնը վերադարձնելու կամ ուժեղացնելու համար։ Եւ եթէ ներկայ մոմենտում ըստ երեսիթին Գերմանիան բացառութիւն է կազմում կաթոլիկ հոգևորականութեան<sup>\*)</sup> վերաբերեալ՝ այդ միմիայն

\*) Պէտք է ի նկատի ունենալ, որ այս բըսաշիւը գրւած է այսպիս կոչւած «կուլտուրկամպֆի», ժամանակ, երբ գերմանական կառավարութիւնը Բիսմարկին գլուխ ունենալով միշտաքանիք ձեռք առաւ ընդհանրապէս կաթոլիկ հոգևորականութեան և մասնաւորապէս ճիզվիտների դէմ։ Այդ միջնաբերը կաթոլիկ կուսակցութեանը գերմանական ըէլիթստագում (այսպէս կոչւած կենդրունը) կառավարութեան հետ գիտադրութեան մէջ գրին։ Բայց այս երկար չտեսց։ Արդէն սոցիալիստների դէմ բացառիկ օրէնքներ մշակելիս կաթոլիկները մօտեցան կառավարութեան։ այս մերձեցումը աւելի ու աւելի սերտացաւ, և ներկայումս կենդրոնական կուսակցութիւնները պահպանողականի հետ դեր-

այդպիս թում է։ Այս ամենաանմիտ քազաքականութիւնը, որ միմիայն իշխող դասերի պետական գործիչը կարող էր մտածել կաթոլիկ հոգևորականութեանը ճնշւած վիճակի հասցրեց և հենց դրանով էլ հարկադրեց նրան դուրս գալ այնպիսի պահանջներով, որ մի այլ դէպքում նա երբեք ոչ կանէր, ոչ էլ կքաջալերէր։ Թէ ինչ զիրքբունեցին նորերս կաթոլիկութեան առաջնորդներն ու նշանաւոր ներկայացուցիչները (նրանք, ովքեր կուրօրէն ու անդիտակցուրէն հետեւում էին առաջնորդներին, հաշւիչնեն առնւում) Բաւարիայում Պրուսիայում և այլ տեղեր՝ բաւականին յայտնի է։ Նըրանք միշտ կանգնած էին աջակողմում այն էլ ծայրայել աջակողմնում, որ նկատւում է ներկայումս Աւստրիայում և առանձնապիս Ֆրանսիայում իսկ մօտիկ ապագայում նաև

մանական կառավարութեան ամենահուատարիմ յենարանն են ամենուրեք, ուր պահանջում է որ և է յետադիմական միջոց գործադրել։

Գերմանիայում \*): Արա մէջ մենք երբեք չենք սխալում: Եւ միթէ կարող է այլ կերպ էլ լինել: Մարդկութեան առաջադիմութիւնը պահանջում է կոհւ յայտարարել ամեն արտօնութեան, ամեն իշխանութեան. եկեղեցին ժողովրդի վրայ պահաս իշխանութիւն չունի՝ քան կառավարութիւնը. նա կուռում է այն ամենի դէմ՝ ինչ դրանց ոչնչացմանն է ծառայում: այսինքն գիտութեան ու զարգացման, որնց ձգտում է սոցիալիզմը:

Սոցիալիզմն է ամենախակական ժողովրդական և մարդկային վարդապետութիւնը, որովհետեւ նա խսկապէս ցանկանում է գործադրել կեանքի մէջ այն բարոյական օրէնքները, որ 18 դարերի ընթացքում եկեղեցու համար իրեւ ցուցանակ են ծառայել և գործադրւել նրա ձեռքով միմիայն ամբոխներին ձնշելու ու կեղեցելու համար: Սոցիալիզմը ուզում է ընդհանուր հաւասարութիւն, ընդհանուր սէր, ընդհանուր երջանկութիւն իրականացնել ոչ թէ նրա համար, որ այդ

քարոզել են Բուդդան, Յիսուսն ու Մահմեդը, այլ նրա համար, որ դրանք ըստ ինքեան նպատակ, իդեալ են, որ զգացել ու դէպի որը անդիտակցօրէն ձգտել է բոլոր երկների, բոլոր պետական կազմակերպութիւնների և բոլոր գաւանանքների մարդկութիւնը: Աս կհասնէր դրան և այն դէպքում, եթէ զոյութիւն չունենային ոչ Բուդդան, ոչ Քրիստոսը, ոչ էլ Մահմեդը: Այդ վարդապետները՝ երկիրը իբրև տանջանքների հովիտ ներկայացնելով՝ շարունակ չափաւութիւն ու ժուժկալութիւն են քարոզել և մարդկութեան ցոյց են տւել ալպազայ կեանքը: Բայց մինչդեռ չկան ու չեն էլ կարող լինել ոչ մի փաստեր, տւեալներ, որոնք այդ միւս կեանքի զոյութիւնը ապացուցանէին, որովհետեւ դա խելք կտրելու բան չէ, և դրան հաւատալը միայն կաշկանդում է մարդկային ձգտումները ու արգելում մարդկային առաջադադիմութիւնը:

Այն բոլոր լաւ բաները, որ Քրիստոնէութեան իշխանութեան ժամանակ են ծագել, նրան չեն պատկանում, այլ այն ահազին չարիքին ու թշուառութեան, որ

\*.) Այս նախագուշակութիւնը այժմ լիովն իրականացել է:

նա բերել է իր հետ, մենք չենք ուզում:

Ա.Հա երկու խօսքով մեր հայեցակետը:  
Ա.յսպէս ուրեմն, պ. քահանայ, Դուք  
այժմ կհասկանաք՝ թէ որքան անվերջ հեռ  
ոռւ են մեր ձգտումները քրիստոնէութեան  
ձգտումներից:

Չեր եղիսկոպոսները, Չեր կանոնիկները (քահանաները), Չեր կոմսերը, բարոններն ու բուրժուան, որոնք կաթողիկ շարժման պարագուինն են, այդ մարդիկ մեռոնք չեն: Դրանք ոչ հաւասարութիւն են ուզում, ոչ մարդկութեան երջանկութիւն, որովհետեւ հակառակ դէպքում նրանք պէտք է եթէ ոչ բոլորովին հրաժարւէին իրենց արտօնեալ վիճակից՝ գոնէ յամենայն դէպովիչէին այդ, որպէս զի թողնեն յաղթանակելու մարդկութեան այն երջանկութեանը, որին իրը թէ ձգտում են նրանք: Ծնդհաշակառակը՝ նրանք ներկայանում են իրրե արտօնութիւնների ու դասակարգային իշխանութեան զինաւոր պաշտպաններ. նրանք ոչ թէ արդարութիւն են կամենում, այլ բարերարութիւն, ոչ թէ հաւասարութիւն, այլ

հզու հնազանդութիւն, — ոչ թէ գիտութիւններ, այլ հաւատ:

Եւ այն ժամանակ, երբ ժողովուրդը ծարաւի է ու ձգտում է մարդավայել ապրուստի և իր տանջանքների ու աշխատանքի արդիւնքներն է ուզում տեսնել, դրանք նրանք քարոզում են ներկայ վիճակով բաւականանալ և նրան միմիթարում են երկինք ցոյց տալով, մինչդեռ իրենք ապրում են իրրե աղաներ և իրենց ժամանակը բաւականութիւնների մէջ են անցկացնում օգտւելով ուրիշների աշխատանքի պտուղներից: Կաթոլիկ ժողովուրդը, որ չարչարւում ու աշխատում է և որը մինչև այժմ այդ մարդկանց է հետեւել, այդ ժողովուրդը մեզ է պատկանում և մենք յոյս ունենք, որ կզայ մի օր, երբ նրանց աչքերն ել կբացւեն մեր կողմը նայելու համար: Ապա եթէ մեր շարքերը կմտնի նաև թշւառ ու ճնշւած ստորին հոգեորականութիւնը, որի պրոլետարիական վիճակը այնքան հիանալի նկարագրել էք Դուք, ինչ անենք, բարի, համեցէք: Այն ժամանակ միայն նրանք կհասկանան, որ այն իդիալական ձգտումները, որոնք

Նրանք ուզում՝ էին իրագործել եկեղեցու  
միջոցով՝ կիրագործւեն մեր շարքերում՝  
մեր միջոցով։ Նրանք կտեսնեն, որ մենք  
իրենց համար աւելի լաւ հարց ունենք վըն  
ուելու, քան իրենց կրօնի դատարկ ֆոր  
մուլաների կատարելն է, որոնք մինչև այժմ  
միւս բոլոր կրօնների նման միայն արգել  
են եղել մարդկութեան իրական կատարե  
լագործութեան։ Զեր սեփական ապացոյցո  
Դուք, պ. քահանայ, մի որ և է սպասաւո  
րից (լակեց) կամ՝ աղախնից աւելի վատ և  
ապահոված և ամենայետին պրոլետարիատ  
կեանք էք վարում։ Խսկ մինչդեռ Զեր եպիս  
կոպոսը իրբև մի մեծ իշխան է ապրում  
իբրև այդպիսին արդիւնքներ ու յարգանք  
ներ վայելում։ Եթէ քրիստոնէութիւնը, ինչ  
պէս Դուք էք ասում, նոյնն է կամենու  
ինչ որ սոցիալիզմը, ի՞նչպէս կարող էր ն  
վիճակների տարբերութեան մի այդպիսի հա  
մարդրութիւն, այդպիսի անհաւասարութիւ  
ստեղծել և այդ պաշտպանել իրեւ «Աս  
տծուց սահմանւած կարգ»։ Միթէ այդպիս  
կրօնը կարող է արժանանալ մեր յարգան  
քին ու քաջալերութեան։ Գուցէ Դուք

պահանջէք, որ մենք ընդհանուր բարօրու-  
թեան ու մարդկութեան, որքան հնարաւոր  
է, բարձրագոյն երջանկութեան սպասենք  
այնքան, մինչև որ կրօնը դրանք տայ մեզ։  
Այն կրօնը, որ ահա արդէն 19 դար է ինչ  
դոյութիւն ունի և մինչև այժմ չի կարու-  
ղացել համոզել իր սեփական սպասաւորնե-  
րին, որ անհրաժեշտ է իրագործել այսպէս  
ասած իր սկզբունքները։

Այդ գէպքում յաւիտեան պիտի սպա-  
րոց (լակեց) կամ՝ աղախնից աւելի վատ և  
ապահոված և ամենայետին պրոլետարիատ  
կեանք էք վարում։ Խսկ մինչդեռ Զեր եպիս  
կոպոսը իրբև մի մեծ իշխան է ապրում  
իբրև այդպիսին արդիւնքներ ու յարգանք  
ներ վայելում։ Եթէ քրիստոնէութիւնը, ինչ  
էլ աջողւի։

Այն, ինչ Դուք առաջ էք բերում իբրև  
բացառութիւն, կանոն է, սկզբունք, իսկ Զեր  
կանոնը բացառութիւն։ Սակայն չէ որ Դուք  
գիտէք, որ բացառութիւնը երբեք չի ոչըն-  
չացնում կանոնը։

Այսպէս, ինձ համար միանգամայն ան-  
հնարին բան է համաձայնել Զեր հայեաց-  
քին՝ թէ քրիստոնէութիւնը նոյն բանին է

ձգտում՝ ինչ որ սոցիալիզմը։ Քրիստոնէութիւնն ու սոցիալիզմը իրար այնպէս են հակադրում։ ինչպէս ջուրն ու հուրը։ Այսպէս կոչւած բարի սերմը, որ Դուք, բայց ոչ ես, գտնում եք քրիստոնէութեան մէջ, քրիստոնէական չէ, այլ հանրամարդկային։ Իսկ այն, ինչ իսկապէս քրիստոնէութեանն է պատկանում—նրա վարդապետութիւնն ու դոդմաները—թշնամի են մարդկութեան։ Զերտեսութեան ու գործնականի մէջ եղած հակասութիւնից դուրս գալը ես Զեղ ԵՄ թողնում։

Հեղինակ «Գերմանական րէյխստագի և լանդստագների պարլամենտական գործունեութիւնն ու սոցիալդեմոկրատիան բրուժիւրի»:

Լայպիցի  
Փես. 1874 թ.



ՀՀ Ազգային գրադարան



NL0210211

10

Зм.



Կիմել՝ Թշուածին Ակադեմիա Վասն Տեր Գևորգին

